

Die armenischen Übersetzungen byzantinischer Rechtsbücher. Erster Teil: Allgemeines; Zweiter Teil: Die «Kurze Sammlung» («Sententiae Syriacae») herausgegeben, übersetzt und erläutert von HUBERT KAUFHOLD, Löwenklau-Gesellschaft e. V. Frankfurt am Main 1997, S. 223 (Forschungen zur byzantinischen Rechtsgeschichte/erausgegeben von Dieter Simon, Bd. 21).

Մայնի Ֆրանկֆուրտի Եվրոպական իրավունքի պատմության ուսումնասիրության կենտրոնը (Max-Planck-Institut für europäische Rechtsgeschichte) մեկ տասնամյակ է ինչ իրականացնում է մի ընդգրկուն ժրագիր, որի նպատակն է բյուզանդական իրավունքի հուշարձանների հետքերի ուսումնասիրությունը հին Ռուսիայում, Հայաստանում և Վրաստանում: Այդ առումով հսկայական նախապատրաստական աշխատանք է ձեռնարկվել նշված ինստիտուտի կողմից, հավաքվել են աշխարհի տարբեր գրադարաններում պահվող հունարեն, հայերեն, սլավոներեն և վրացերեն իրավաբանական մատյանների միկրոթագավենները: Այդ ինստիտուտի նախաձեռնությամբ և Ռուսաստանի, Հայաստանի ու Վրաստանի գիտական կենտրոնների աջակցությամբ «Բյուզանդական իրավունքի փոխառումը (ոսկիպցիան)» հին Ռուսաստանում, Հայաստանում, Վրաստանում» թեմատիկ գիտական կոնֆերանսներ են տեղի ունեցել Երևանում (1986), Ֆրանկֆուրտում (1989), Քյոլնիսիում (1991), Մյունխենում (1993), յուրա է տեսել թեմային վերաբերող ծավալուն մատենագիտություն: Այդ աշխատանքների կոորդինացումը պրոֆ. Դ. Ջիմոնի հանձնարարությամբ իր վրա է վերցրել Ֆրանկֆուրտի Եվրոպական իրավունքի պատմության ինստիտուտի աշխատակից, զոկտոր Լյուդվիգ Բուրգմանը: Արդեն հրատարակի վրա են մի շարք իրավաբանական

հուշարձանների գիտաբանական քննադրերը: Այս ծրագրի իրագործմանը, հատկապես՝ հայկական և վրացական իրավունքի հուշարձանների հետազոտման գործում, սկզբից ի վեր իր գիտական պատրաստությունն ու եռանդն է ներդրել նաև գրախոսվող հետազոտության հեղինակ, Մյունխենի համալսարանի պատվավոր պրոֆեսոր, իրավաբան և արևելագետ, «Oriens Chrestianus» շանրանանալ գիտական ամսագրի խմբագիր Լուրերտ Կաուֆհոլդը:

Գրախոսվող աշխատանքը սկսվում է հեղինակի առաջարկում, հապավված գրականության և համառոտումների ցանկերով, որոնց հետևում է երկու մասից բաղկացած աշխատությունը: Առաջին մասը, որը կրում է «Ընդհանուր ակնարկ» (է. 3—72) վերնագիրը, ընդարձակ ներածություն է հայտնի ինքնուրույն) և թարգմանական իրավաբանական հուշարձանների ուսումնասիրության և վերջիններիս ձեռագրական

2 Վերջին տարիներին Մայնի Ֆրանկֆուրտի «Forschungen zur Byzantinischen Rechtsgeschichte» շարքում հրատարակվել են Էկլոգայի հունարեն (Ecloga. Das gesetzbuch Leons III und Konstanlinos V./hrsg. v. Ludvig Burgmann, 1983; Ecloga Basilicorum/hrsg. v. Ludvig Burgmann 1988) և արաբերեն (Die Arabische Ecloga. Das vierte Buch der Kanones der Könige aus der Sammlung des Makarios /hrsg. v. Stefan Leder, 1985) բնագրերը, Աթանաս մեմեսացու նովելների հավաքածուն (Das Novellensynlogma des Athanasios von Emesa /hrsg. v. D. Simon und Sp. Troianos, 1989):

3 Գրքիս հեղինակը հայապես ընթերցողին քաջածանոթ է «Հանդես Ամսորչայում» (անս. Zur Übernahme byzantinischer Rechtsbücher durch die Armenier, Տե՛ս ՀԱ, 90, էջ 591—614) և «Պատմա-բանասիրական հանդեսում» («Համուտ ժողովումն օրինացր» իբրև օրինակ Բյուզանդական օրենսգրքի հայերեն թարգմանության.— ՊԲՀ, 1997, № 2, էջ 189—204) հրատարակած հետազոտություններով:

1 Bibliografie zur Rezeption des byzantinischen Rechts in alten Rußland sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts/Unter Mitwirkung von Azat Bozozjan, Igor' Cicurov, Sulchan Goginava, Kiril Maksimovic und Jaroslav Scapov zusammengestellt von Ludvig Burgmann und Hubert Kaufhold. Löwenklau-Gesellschaft e. V. Frankfurt am Main 1992 (Forschungen zur byzantinischen Rechtsgeschichte/erausgegeben von Dieter Simon, Bd. 18).

ավանդույթի բացահայտման, իսկ երկրորդ մասը «Համառոտ ժողովումն» երկի հայերեն թարգմանության բնագրին վերաբերող բնագրագիտական, ձեռագրագիտական և լեզվաբանական հմտալից հետազոտություն (75—102) է: այդ երկի գիտաբանական բնագրի հրատարակմամբ ու զուգահիշ գերմաներեն թարգմանությամբ (էջ 104—180), ծանոթագրություններով (180—193), օգտագործված տերմինների ու արտահայտությունների հայերեն—ասորերեն—գերմաներեն լիակատար բառարանով (195—223):

«Ընդհանուր ակնարկում» հեղինակը, անդրադառնալով վերջին 40 տարում հայ միջնադարյան իրավունքի հուշարձանների հրատարակության բնագավառում ձևաբար բերված հաջողություններին (հատկապես Կանոնագրքի, Մխիթար Գոշի և Դավիթ Ալավկաորդու դասաստանագրքերի հրատարակություններին), ընդգծում է, որ գիտական աշխարհին ավելի քիչ են ծանոթ XII դարում բյուզանդական օրենսգրքերի հունարենից և ասորերենից կատարված հայերեն թարգմանությունները: Այդ հուշարձանների մեջ իր ուրույն տեղն ունի «Համառոտ ժողովումն»-ի բնագիրը, որի ասորերեն քննական բնագիրը հրատարակվել է ութ տարի առաջ:

Ներածության սկզբում փուլերի է բաժանված հայոց իրավունքի զարգացման պատմությունը՝ ըստ պահպանված հուշարձանների: Այս խոսքը մասնավորեցված է բյուզանդական իրավունքի հուշարձանների բնագրերի և հայերեն թարգմանությունների հրատարակությունների շուրջ: Հեղինակն անդրադառնում է բյուզանդական իրավունքի հուշարձանների XII դարի թարգմանիչ ներսես լամբրոնացու կատարած աշխատանքին, բերում է նրա կողմից թարգմանված բյուզանդական իրավունքի հուշարձաններին կցված հիշատակարանները, անդրադառնում այդ աշխատանքում թեոդորոս ասորի քահանայի առաքելությանը⁴: Այնուհետև առանձին-առանձին ներկայացնում է հայերեն թարգմանված իրավաբանական հուշարձանների (Համառոտ ժողովումն օրինաց, Մովսիսական արէնք, էկլոգա և նրա

հավելվածներ⁵, Զինուրաց օրենսգիրք, Ասորահոմեական օրենսգիրք)⁶ ընդհանուր բնագրագիտական հարցերը: Հեղինակն ըստ պահպանված վայրի և ժամանակի թվարկում է հայոց իրավունքի թարգմանական հուշարձանների ձեռագրերը, նկարագրում է դրանք, միաժամանակ հիշատակելով, թե բյուզանդական իրավունքի որ երկերն են տեղ գտել այդ ընդօրինակություններում: Այնուհետև ըստ բովանդակության խմբավորում է ձեռագրերը, որով առաջին քայլն է կատարում հստակելու ձեռագրական խմբերն ու մատենագրական ավանդույթի դրսևորումները: Աշխատության այս հատվածի իր դասական կուռ կառուցվածքով ուսանելի է ձեռագրական խմբերի նախնական հետազոտություն կատարող յուրաքանչյուր հետազոտողի համար, քանի որ հեղինակը գիտնականներին ի սպաս է դրել արեւելյան ձեռագրերի հետ աշխատանքի իր ողջ փորձը: Ելնելով հայտնի ձեռագրական ժողովածուների բովանդակությունից, նա իրեն հայտնի շուրջ 80 ձեռագրերը բաժանում է ձեռագրական 26 խմբերի (A—Z): Այնուհետև, նկատի առնելով նաև Համառոտ ժողովումնի հայերեն բնագրի տարբերակները, մեծ հմտությամբ քննադատելով է երկի ընդօրինակությունների ձեռագրական խմբերի պատճառաբանված ծառը:

Այս հատվածի վերջում Շ. Կառլֆոլդը անդրադառնում է նաև Վրաստանի թագավոր Վախթանգ Զ-ի (1675—1737) ստեղծած օրենքների ժողովածուին և հիմնվելով իր նախորդների վրա, հավաստում, որ այնտեղ տեղ գտած «Հունական իրավունքի» ժողովածուն ուղղակի թարգմանու-

⁵ Էկլոգայի հավելվածների հունարեն բնագրի մասին ավելի մանրամասն տե՛ս L. Burghman—S. Troianos. Appendix Eclogae, տե՛ս Fontes Minores, hrsg. von D. Simon, Bd. 3, Frankfurt am Main, 1979, p. 24—125.

⁶ Պետք է նշել, որ Համառոտ ժողովումն ու Ասորահոմեական օրենսգիրքը հայ մատենագրություն են մուտք գործել ասորական մատենագրությունից, իսկ հիշատակված մյուս երկերը հայերեն են թարգմանվել հունարենից: Այստեղ մտածելու տեղ է տալիս հեղինակի մտեցումը, ըստ որի հոմեարյուզանդական իրավունքի հուշարձան են համարվում ասորերենով պահպանված երկեր, որոնք գրեթե յոթ դար գործավարել են բյուզանդական աշխարհից լսիազանց տարբեր միջավայրում:

⁷ Երուսաղեմ Ս. Յակոբեանց—3308 (զըրված է 1805 թ.) և 182 (1790 թ.) ձեռագրերը նկարագրելիս Շ. Կառլֆոլդը չի նկատել, որ դրանք պարունակում է նաև Զինվորաց օրենսգիրքը:

⁴ Շ. Կառլֆոլդը հավանական է համարում, որ այս հեղինակը նույն Թեոդորոս Բար Վահրունն է, որը մի քանի տարի անց կիլիկիայում հույակվեց հակոբիկ ասորիների հակախոս պատրիարք: Սա հավանաբար նույն հոգևորականն է, որը մասնակցել է նաև 1171/2 թ. հայ-բյուզանդական բանակցություններին (տե՛ս Ա. Բոգոյան. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երևան, 1995, էջ 168):

թյունն է XIV դարում ստեղծված Կոստանդին շարմենուպոլսի երկի համապատասխան հատվածի (էջ 72) և միայն այդ հուշարձանի երրորդ «շառոց իրավունք» բաժինն է Ասորա-հոմեական և Մխիթար Դոշի Դատաստանագրքերի հայերեն բնագրերի թարգմանություն:

Փաստորեն հեղինակը հայագիտության մեջ առաջին անգամ անդրադառնում է հայոց իրավունքի թարգմանական երկերի մատենագրական ողջ ավանդույթին և մեծ խնամքով փորձում է դասակարգել մեզ հասած գրեթե ողջ ձեռագրական նյութը: Գրքի այս մասն ավելի շահեկան կլիներ, եթե նա անդրադառնար նաև ներսես լամբրոնացու թարգմանությունների հիմնական սկզբունքներին և աշխատառճին⁸:

Աշխատանքի երկրորդ մասն ամբողջովին ներվիրված է «Համառոտ ժողովումն» (այսուհետև՝ Հժ) երկի հայերեն թարգմանության ուսումնասիրությանն ու բնագրի հրատարակմանը, որի ասորերեն բնագիրը, ըստ Վատիկանի ասորերեն 560 Ա մատյանի⁹, «Sententiae Syriacae» (այսուհետև՝ SS) խորագրով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Վատիկանի Զեյլը 1968 թ. 10, իսկ քննական բնագիրը՝ հրատարակել է նույն հեղինակի կողմից¹⁰: Ուսումնասիրողներն եկել են այն համոզման, որ այդ բնագիրը կազմվել է 111 դարի երկրորդ կեսին, ավելի վաղ, քան «Ասորա-հոմեական դատաստանագիրքը»: Այն շրջանառության մեջ է դրվել Հոմեական կայսրությունում, սակայն մեզ չեն հասել այս բնագրի ո՛չ լատիներեն, ո՛չ էլ հունարեն տարբերակները: Բնագրի ասորերեն հնագույն տարբերակը բնագրինակվել է Բաղդադում, մոտ 800-ական թթ.: Ըստ պահպանված բնագրինակությունների այս բնագիրը շրջանառության մեջ է եղել միայն հակոբիկ ասորիներին, իսկ XII դարից հետո նաև հայերի միջավայրում: Գրանով է հեղինակը կարևորում հայերեն բնագրի ներկա քննական հրատարակության անհրաժեշտությունը:

Գիտնականը դուրահետաքրքրում է ասորերեն (102 հոդված) և հայերեն (86 հոդված)

8 Ինչպես հայտնի է, ներսես լամբրոնացին իր թարգմանությունները կատարելիս օգտվել է հույն, լատին և ասորի թարգմանիչների ծառայությունից:

9 Սա ասորերեն բնագրի հնագույն տարբերակն է:

10 Sententiae Syriacae, տե՛ս Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte, Romanistische Abteilung. Bd. 85. Weimair 1968, 400—403.

11 Walter Selb, Sententiae Syriacae. Wien, 1990.

15 «Հանդես», № 3

բնագրերի ցանկերը, ըստ որոնց հայերեն բնագրում նկատելի են հոդվածների որոշ տեղափոխություններ (SS §§ 5, 6, 7, 10, 11, 13, 16, 20, 21, 25, 26, 23, 29, 32b, 33 հոդվածները համապատասխանում են հայերենի Հժ §§ 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34 հատվածներին): Հժ-ի հայերեն բնագրում նրկատելի է որոշ հոդվածների բաժանում (SS §7=Հժ 5+22, 11=7+24, 36=16+37, 37=17+38, 41=18+42): Հայերեն բնագրով մեզ չեն հասել մի շարք հոդվածների հայերեն թարգմանությունները (տե՛ս SS 8, 12, 27, 31, 32a, 45—46, 51—52, 61, 63, 68, 70—71, 74—76, 78, 82, 89, 99): Հայերեն բնագրի թարգմանիչը, ըստ հետադոտորի, չի փոխել ասորերեն հոդվածների հաջորդականությունը, նա համեմատել է իր բնագիրը գրեթե մինչև §44-ը և դուրս է բողբել մի շարք պարագրաֆներ, ապա կրկին սկսել է սկզբից և առանց որևէ բացատրության ավելացրել է դուրս մնացածները: Գերմանացի հետադոտորը նաև նկատում է, որ ասորերեն բնագրի հինգ հոդվածներ հայերեն թարգմանության մեջ կրկնվում են. SS § 7-Հժ §§ 5 և 22, SS § 11a-Հժ §§ 7 և 24, SS §36-Հժ §§ 16 և 37, SS § 37-Հժ §§ 17 և 38, SS § 41-Հժ §§ 18 և 42: Դրանք Հ. Կառլֆրեյդը վերագրում է ներսես լամբրոնացու և համարում թարգմանական նոր տարբերակներ: Այս վիճակը մի պարզ ապացույց է այն բանի, որ, ի հակադրություն հայերենի, ասորական բնագրի հաջորդականությունը նախնական է:

Ըստ Հ. Կառլֆրեյդի ասորական բնագրի ըզգալի գծավորությունների առջև է կանգնեցրել թարգմանիչն, քանի որ որոշ տեղերում, այն հասկանալու համար պահանջվում է հոմեական իրավունքի ճշգրիտ իմացություն: Անցնելով Հժ-ի հայերեն թարգմանության ուսումնասիրությանը, Հ. Կառլֆրեյդը նշում է, որ թարգմանիչ ներսես լամբրոնացին երբևէ չի հասկանում բնագրի որոշ հատվածների իմաստը, հաճախ թարգմանում է շատ ազատ, բաց է թողնում մի շարք գծավորակալի հոդվածներ և հատվածներ¹²: Իր ասածն ապացուցելու համար հրատարակիչը բերում է մի շարք օրինակներ: Այսպես. հայերեն բնագրում պակասում են ասորերեն հրատարակության չորս օրենքները (SS §§ 63, 70, 74, 75), ուր հանդիպում է «ունեցվածք» (—ܘܢܝܘܢܝܘܬܐ) Մի շարք պարագրաֆներ ներսես լամբրոնացին չի թարգմանել, քանի որ ասորերեն բնագրում հանդիպել է հունարենից եկած և իրեն անհասկա-

12 Այս հանգամանքը նկատել է նաև Մարտին-Հիգարը, հետազոտելով էկլոգայի հայերեն թարգմանական տարբերակը:

նալի բռների (SS § 31 սնախագիծ» = τρεῖς ἄνδρες, SS § 51 «ընդհանուր» = γενικός, SS § 73 «պետք է տեղափոխվեն» = μεταποτασθῆναι) SS § 89 «գլուխ» = κεφαλή (տարբերակները): Հանդիպելով հազվագեղ օգտագործվող օտար բառի, կամ բռնացիին թարգմանում է այնպես, ինչպես հասկանում է:

ա) SS-ի բնագրում (§§ 25 և 52) լատիներենից սերող «οὐδὲν-ιստում» տեմինը հայերեն թարգմանելն առաջին դեպքում թարգմանում է «ամհապարտ» SS §§ 25=Չժ § 29), իսկ հաջորդ անգամ դուրս է նետում ողջ հոդվածը (SS § 52):

բ) Հունարենից եկող «αἰελλοειδής» (նոտար) տեմինը հայերեն է թարգմանում «դատավոր» բառով (Չժ § 83—SS § 98):

գ) Ասորերեն բնագրում (SS § 48—51) օգտագործված «ἀντιπάλος» (համաձայնագիր) տեմինը հայերեն է թարգմանում «արձակի բան» (տե՛ս Չժ §§ 46 և 48, ընդ որում թարգմանելը բառը չի թարգմանել Չժ § 47-ում = SS § 49 և դուրս է նետել ասորերեն բնագրի § 51-ը):

դ) Ասորերեն բնագրի «ἄνδρα» (արժեքին, փոխհատուցում) հունարեն տեմինը (SS § 83) շրջանցելով, թարգմանելը անդրադարձել է հետեւյալին, թարգմանելով «աղատելի դիրք» (Չժ § 69):

ե) Ասորերեն բնագրի «ἄνδρα» (գրավ) տեմինը (SS §§ 5, 10) հայերեն բնագրում բաց է թողնված (Չժ § 20 և 7 հմմտ. 23), թարգմանությունը հստակ չէ:

զ) «εὐπαρτέλι» (իշխանություն շրջակայքի վրա) տեմինը (SS § 1) հայերեն է թարգմանվել նկարագրական եղանակով (իսրու դատարանի եւ իշխողի քաղաքին... արտաքույ) (Չժ § 1):

է) «κατάστασις» (կարգ, սահման) տեմինը (SS § 83) հայերեն բնագիր է փոխադրվել «կատաստասիս» ձևով (Չժ § 69)18: Նույն ըսկրգրում է կիրառվել նաև «κατατάξις-τάξις» (SS § 30b) = կուրատոր (Չժ § 15) «ἐπιπέτασις», «ἐπιτροπὸς, ἀεγύσιον» և «προξένος» տեմինները նկատմամբ:

Մի շարք հունարեն տեմիններ XII դարի թարգմանելը թարգմանել է հետևյալ կերպ.

ա) Ասորերեն բնագրի «ἄνδρα» (անհրաժեշտություն, պարտավորվածություն SS §§ 30, 95, 100) բառը ճշտորեն թարգմանել է «կալ հրա-

ման» (Չժ § 15), «կալ հարկ» (Չժ § 80), կամ «պարտի» (Չժ § 84):

բ) «ἄνδρα»-ը («ստատաթուղթ SS § 6») «գիր» (Չժ § 21):

գ) «ἀνδρα»-ն «որպես կանոն «կտակ» (Չժ §§ 5, 16, 17, 19, 22, 32, 35, 38, 45, 67, 76, 81) ձևով, որոշ ձևափոխում էլ մնացել է օտար բառը՝ «տիաթիկ» կամ «դիաթիկ» (Չժ §§ 37, 40, 44): Երկու ձևով էլ բառը հանդիպում է գլխացանկում. «կտակ» (Չժ §§ 5, 19, 22, 38, 76) և «դիաթիկ» (Չժ §§ 40, 44):

դ) «ἀνδρα»-ն (ամուսնական նվեր, SS § 95) թարգմանվել է «տուայր» (Չժ § 80): Իսկ մի անհասկանալի տեղում թարգմանելը բառը դնել է նետել. SS § 67 = Չժ § 61:

ե) «ἀνδρα» (ավագակ, SS § 85)-ը թարգմանել է «գող» (Չժ § 71):

զ) «ἀνδρα»-ը SS §§ 39, 60, 85)՝ «օրէնք» (Չժ §§ 40, 56, 71):

է) «ἀνδρα»-ն (կարողություն, SS §§ 9, 11, 96)՝ «ինչք» (Չժ § 8), «կամք» (Չժ § 24), «ստացուածք» (Չժ § 81):

ը) «ἀνδρα»-ը (հաղորդել, SS § 58)՝ «ասել» (Չժ § 54):

թ) «πατρὸν» = patronus-ը (SS § 96)՝ «հոգացող» (Չժ § 81). ընդ որում ուսումնասիրողը ենթադրում է, որ հայերեն տեմինը կարող է լինել ասորերեն բառի թարգմանությունը:

ժ) «ἀνδρα»-ը (կեղծել, SS § 29)՝ «սուտ կտակ գրել» (Չժ § 32):

Լ. Կառնիզոնը հայերեն թարգմանություն մեջ պակասող ասորերեն բնագրի մի շարք գլուխներին բացակայությունը բացատրում է այն հանգամանքով, որ հայերենի թարգմանելը լավ չի հասկացել տվյալ հոդվածի բովանդակությունը (տե՛ս SS §§ 8, 12, 27, 32a, 45, 46, 61, 68, 78, 82 89):

Գերմանացի գիտնականն անդրադառնում է նաև Չժ երկի և բյուզանդական իրավունքի մշակույթ իրավաբանական հուշարձանների, հատկապես՝ «Ասորա-հռոմեական օրենսգրքի» թարգմանության լեզվին, ընդգծելով, որ այն դասական հայերենն է և ոչ թե կիրիկյան կամ միջին հայերենը: Կարստը, որ ժամանակին անդրադարձել է այդ հարցին, հիմնվել է այն ժամանակ հրատարակված «Ասորա-հռոմեական օրենսգրքի» Բրունսի և Զախաույի հրատարակության վրա, որը կատարված է 1739 թ. ընդօրինակված Բեռլինի կայսերական գրադարանի № 59 ձեռագրից, և եկել այն համոզման, որ այս երկերը թարգմանվել են միջին հայերենով: Ըստ Կառնիզոնի, այդ ընդօրինակության բնագիրը հետագայում խմբագրված է, բանի որ հնագույն՝ Վենետիկի 1223 և Երևանի 488 մատյանների

18 Ձեռագրական տարբերություն-բացատրություններից կարելի է եզրակացնել, որ բառի բուն իմաստը ընդօրինակողների կողմից չի բնկալվել:

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք թարգմանության բնագիրը պահպանել են առավել կուսական վիճակում:

Հեղինակն ամենայն մանրամասնությամբ հետազոտում է տարրեր ձևադրական խմբերի ուղղագրական ավանդույթը, հոլովների կիրառման շեղումները, անդրադառնում օտար բառերի տառադարձման սկզբունքներին և մասնագետներին ուշադրությունը հրավիրում XII դարի վերջում կիրառության մեջ մտնող բառերի վրա (տիաթիկ = անդառնալիք, պոյգ, ևպիտրպոս = հոգեբարձու = կուրատոր, լիդատոն և այլն):

Չ. Կաուֆհոլդը ամենայն բարեխղճությամբ ներկայացնում է ներսև կամրոնացու թարգմանած շԺ երկի հայերեն բնագիրը, բերում օրենսդրերի ցանկերի համառոտ (էջ 104—109) և երկու ընդարձակ տարբերակները (էջ 110—131), զերմաներեն թարգմանության տողատակերում և ծանոթագրությունների մեջ արտացոլում կարևորագույն տարբերությունները: Հիմնական բնագրային տարբերությունները տալով ըստ ձևադրական խմբերի, հեղինակը բերում է նաև առանձին ձևադրերի կարևորագույն շեղումները, հիշատակելով յուրաքանչյուր մատյանի թղթավահմանը ըստ պահպանման վայրի: Նա հայերեն բնագիր կազմողներին իր հրատարակության օրինակով ներկայացնում է հայավումների րավական պարզեցված մի համակարգ՝ 14 շայերեն—ասորերեն—գերմաներեն բառարանում տրվում են յուրաքանչյուր հայերեն բառի օգտագործման բոլոր դեպքերը, նշվում է ասորերեն բնագրում համապատասխանությունը և Ասորահոռմեական օրենսգրքի հայերեն թարգմանությունում դրանց կիրառման փաստը: Հունարեն—ասորերեն—հայերեն բառարանում (19 216—223) հեղինակը փորձում է նաև վերականգնել ներսև կամրոնացու ձևերին եղած

ասորերեն, ինչպես նաև վերջինիս նախորդած հոռմեական բնագրի բառապաշարը: Միջնադարյան բնագրի նկատմամբ այս խնամքը խոսում է տեքստերի պատրաստման բնագավառում ուսումնասիրողի մեծ փորձի և նվիրումի մասին:

Մեր պարտքն ենք համարում կատարել նաև մի շարք սրբագրումներ. Երևանի № 2750 մատյանն ընթերցանակվել է 1804 թ., № 2880-ը՝ 1847 թ., Վենետիկի № 993-ը՝ 1811 թ. դարում, Քյուրտյան 87-ը՝ 1622 թ.: ՇԺ-ի վերջին հոդվածում, մեր կարծիքով սխալմամբ տողատակ է անցել «փևսա» ընթերցումը, որն ամենայն հավանականությամբ պիտի լիներ նախնական բնագրում, քանի որ առանց այդ բառի անհնար է ընկալել իմաստը: Պատրաստվում էինք ձևագրերի խմբավորման մասին ավելի մասսագիտորեն խոսել «Ձինվորաց օրենսգրքի» հրատարակության առաջաբանում, այդ իսկ պատճառով այստեղ ձևապահ ենք մնում անդրադառնալ այդ հարցին:

ՇԺ-ի բնագիրը կազմելու համար Չ. Կաուֆհոլդը օգտագործել է XIII—XIX դդ. ընթացքում ընդլրինակված շուրջ 51 մատյան, որոնց սահմաններում ավարտվում են մեր այսօրվա գիտելիքները հիշյալ բնագրի ձևագրերի վերաբերյալ: Ըստ Չ. Կաուֆհոլդի ՇԺ-ի ձևագրերի քանակությունը խոսում է այն մասին, որ այս երկը, ինչպես նաև Ասորահոռմեական դատաստանագիրը և բյուզանդական ծագման մյուս իրավարանական բնագրերը, գործնականում կարևոր դեր են խաղացել հայոց իրավարանական ժողովրդային ձևավորման գործում:

Չ. Կաուֆհոլդի այս հմուտ հետազոտությունը իր հստակ սկզբունքներով օրինակ կարող է հանդիսանալ հետազոտում հայկական թարգմանական, հատկապես իրավաբանական բնագրերի հրատարակման և ուսումնասիրության համար: Այդ իսկ պատճառով անհամբերությամբ ենք սպասում նրա կողմից Ասորահոռմեական դատաստանագրի հրատարակմանը, նոր հաջողություններ ցանկանալով բազմահմուտ հետազոտողին:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԲՈՂՈՅԱՆ

14 Չ. Կաուֆհոլդը օգտագործում է միայն հետևյալ նշանները: (= փոխարեն), + (= բնագրային հավելում), օՊ (= բառի կամ արտահայտության բացակայություն):